

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նկարում կետի ո՞ր բարձրությունն է նշված  $U$  տառով.

- 1) ուղղաձիգ
- 2) հարաբերական
- 3) բացարձակ
- 4) միջին



2 Ո՞րն է ամենափոքր մասշտաբը.

- 1) 1 : 5 600 000
- 2) 1 : 5 600
- 3) 1 : 56 000
- 4) 1 : 560 000

3 Երկու կետերի հեռավորությունը քարտեզում 32 սմ է, իսկ քարտեզի մասշտաբը՝ 1 : 4 800 000: Կետերի միջև իրական հեռավորությունը կլինի.

- 1) 6144 կմ
- 2) 1536 կմ
- 3) 2000 կմ
- 4) 3072 կմ

4 Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնում են հասարակածի վրա.

- 1) մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին
- 2) հունիսի 22-ին և դեկտեմբերի 22-ին
- 3) մարտի 21-ին և հունիսի 22-ին
- 4) սեպտեմբերի 23-ին և դեկտեմբերի 22-ին

5

**Բնութագրումով որոշել հողմահարման տեսակը.**

*Այդ հողմահարումը տեղի է ունենում ապարի և օդի զազերի միջև կատարվող փոխազդեցության և ջրային տարբեր լուծույթների միջոցով, ընդ որում՝ դրա հետևանքով ապարների հատկանիշները փոխվում են, առաջանում է նոր ապար: Հողմահարման  $n^{\circ}$  տեսակն է.*

- 1) երկրաբանական
- 2) քիմիական
- 3) օրգանական
- 4) ֆիզիկական

6

**Աշխարհագրական  $n^{\circ}$  լայնություններում է ջերմաստիճանի տատանման տարեկան լայնությունը մեծ.**

- 1) արևադարձային
- 2) բևեռային
- 3) բարեխառն
- 4) հասարակածային

7

**Կլիմայի այն տիպը, որին բնորոշ են ցուրտ ու չոր ձմեռները և տաք ու խոնավ ամառները, կոչվում է.**

- 1) մուսսոնային
- 2) ծովային
- 3) միջերկրածովային
- 4) ցամաքային


8

**Ռուսական «Վոստոկ» գիտակայանը Հարավային բևեռից հեռու է 1221 կմ: Աշխարհագրական  $n^{\circ}$  լայնության վրա է գիտակայանը.**

- 1) հվ. լ.  $79^{\circ}$
- 2) հվ. լ.  $69^{\circ}$
- 3) հվ. լ.  $77,5^{\circ}$
- 4) հվ. լ.  $81^{\circ}$


9 Ո՞ր քամիներն են պատկերված նկարում.

- 1) լեռնահովտային քամիներ
- 2) բրիզներ
- 3) պասսատներ
- 4) մուսսոններ



10 Ո՞ր նկարում է պատկերված երկրագնդի վրա քաղցրահամ և աղի ջրերի ճիշտ հարաբերակցությունը.

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



11 Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքներ են.

- 1) Պերուականը և Արևելաավստրալականը
- 2) Բենգեյանը և Գվիանականը
- 3) Բրազիլականը և Կանարյանը
- 4) Մուսսոնայինը և Ֆոլկլենդյանը

12 **Ի՞նչն է բնորոշ տունդրայի բնական զոնային.**

- 1) խոտակեր խոշոր կենդանիների տարածումը
- 2) պողոզային հողերի գերակշռությունը
- 3) հողի բազմամյա սառածությունը
- 4) ծառային բուսականության տարածումը

13 **Բնութագրումով որոշել ոլորտը.**

*Վերնոլորտի սահմաններում՝ 25–30 կմ բարձրության վրա է այդ գագաթից բաղկացած շերտը, որը կլանում է Արեգակից եկող՝ կյանքի համար վտանգավոր ուլտրա-մանուշակագույն ճառագայթները: Գագային ո՞ր շերտն է.*

- 1) օզոնի
- 2) թթվածնի
- 3) ածխաթթու գազի
- 4) ջրածնի

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Արևադարձներում օդի վերընթաց շարժման հետևանքով առաջանում են ցիկլոններ:
- 2) Տաք և սառը օդային զանգվածների շփումից առաջացած մրրկահողմը Հյուսիսային Ամերիկայում կոչվում է տորնադո:
- 3) Տարվա ընթացքում իրենց ուղղությունը երկու անգամ փոխող քամիները կոչվում են թայֆուններ:
- 4) Արևադարձներից դեպի բարեխառն գոտիներ փչող քամիները կոչվում են մուսսոններ:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Ամբողջ տարվա ընթացքում մթնոլորտային ցածր ճնշման գոտիներ են առաջացել արևադարձային և բևեռային լայնություններում:
- 2) Որքան օդը սառն է, այնքան մթնոլորտային ճնշումը ցածր կլինի:
- 3) Ամբողջ տարվա ընթացքում մթնոլորտային բարձր ճնշման գոտիներ են առաջացել հասարակածային և բարեխառն լայնություններում:
- 4) Որքան արևի ճառագայթների անկման անկյունը փոքր է, այնքան ստացվող ջերմությունը քիչ է:

16

**Կանադական արկտիկական արշիպելագի կղզիներ են.**

- 1) Պուերտո Ռիկոն և Ճամայկան
- 2) Նյուֆաունդլենդը և Վանկուվերը
- 3) Կուբան և Հայիթին
- 4) Բաֆինի Երկիրը և Վիկտորիան

17

**Ո՞ր տարածքների կլիման մուսսոնային չէ.**

- 1) Ամուր և Յանցզի գետերի միջին ու ստորին հոսանքների ավազան
- 2) Կորեա թերակղզի և Կյուսյու կղզի
- 3) Հինդուստան թերակղզի և Հոնսյու կղզի
- 4) Փոքր Ասիա թերակղզի և Բալկանյան թերակղզի

18

**«Գետ – հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Զամբեզի – ամառ
- 2) Եփրատ – ձմեռ
- 3) Հուանհե – գարուն
- 4) Օրինոկո – ձմեռ

19

**Մագնիսական հակումը արևելյան է՝  $3^{\circ} 35'$ , իսկական ազիմուտը՝  $176^{\circ}$ :  
Մագնիսական ազիմուտը կլինի.**

- 1)  $179^{\circ} 35'$
- 2)  $172^{\circ} 65'$
- 3)  $172^{\circ} 25'$
- 4)  $179^{\circ} 25'$

20

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Արեգակի ճառագայթները հս. լ. 25°-ի տակ տարվա մեջ մեկ անգամ ընկնում են ուղղահայաց:
- 2) Հունիսի 22-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:
- 3) Մարտի 21-ը կոչվում է գարնանային գիշերահավասարի օր:
- 4) Դեկտեմբերին ցերեկը Հարավային բևեռում ավելի կարճ է, քան Երևանում:

21

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Անամպ օրերին ամենուր օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվում է վաղ առավոտյան:
- 2) Սառը օդի ճնշումն ավելի մեծ է, քան տաք օդինը:
- 3) Անտիցիկլոնի կենտրոնում ճնշումն ավելի ցածր է, քան ծայրամասերում:
- 4) Լեռն ի վար իջնելիս մթնոլորտային ճնշումը նվազում է:

22

**Աֆրիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական գոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Տարածված կենդանատեսակներն են էմու ջայլամը, դինգո շունը և բադակտուցը:
- 2) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:
- 3) Հողային ծածկում գերակշռում են շագանակագույն և մոխրագորշ հողերը:
- 4) Տարածված բուսատեսակներն են բաոբաբը, ֆիկուսը, կաուչուկատու հնեան:

23


**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Աշխարհում մակրնթացության ամենաբարձր ալիքը գրանցվել է Հուդզոնի ծոցում:
- 2) Բիսկայան ծոցի ջրերը ողողում են Պիրենեյան թերակղզու հարավային ափերը:
- 3) Մեծ Ավստրալական և Կարպենտարիա ծոցերը պատկանում են Հնդկական օվկիանոսի ավազանին:
- 4) Պարսից ծոցը Օմանի ծոցից բաժանվում է Բոսֆորի նեղուցով:

24

Քարտեզում *Ս* տառով նշված հրվանդանն է նշված.

- 1) Ստիվի Փոյնթ
- 2) Բայրոն
- 3) Յորք
- 4) Հարավարևելյան



25

Քարտեզում *Ը* տառով նշված նավահանգիստն է նշված.

- 1) Բրիսթեն
- 2) Փերթ
- 3) Սիդնեյ
- 4) Մելբուռն

26

Ներկայումս երկրագնդի բնակչության թիվը տարեկան աճում է.

- 1) 100–110 մլն–ով
- 2) 50–60 մլն–ով
- 3) 60–70 մլն–ով
- 4) 75–85 մլն–ով

27

Բնակչության ամենօրյա տեղաշարժը մի բնակավայրից մեկ այլ բնակավայր աշխատանքի կամ ուսման նպատակով, որը հատկապես տարածված է քաղաքային ագլոմերացիաներում, կոչվում է.

- 1) ճոճանակային միգրացիա
- 2) սեզոնային միգրացիա
- 3) էմիգրացիա
- 4) ներքին միգրացիա



28 **Բնութագրումով որոշել երկիրը.**

*Եվրոպական այս երկիրը էլք չունի դեպի Համաշխարհային օվկիանոս:  
Մակերևույթը լեռնային է, հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով: Տնտեսության  
միջազգային մասնագիտացման ճյուղերից են պանրագործությունը, ժամացույց-  
ների արտադրությունը: Ո՞րն է այդ երկիրը.*

- 1) Ավստրիան
- 2) Ֆրանսիան
- 3) Շվեյցարիան
- 4) Շվեդիան

29 **Երկրի տարածքը կազմում է 96 400 կմ<sup>2</sup>, բնակչության թիվը՝ 12 050 000 մարդ:  
Բնակչության միջին խտությունը կլինի.**

- 1) 6025000 մարդ/կմ<sup>2</sup>
- 2) 11953600 մարդ/կմ<sup>2</sup>
- 3) 125 մարդ/կմ<sup>2</sup>
- 4) 155 մարդ/կմ<sup>2</sup>

30 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Զարգացած վերամշակող արդյունաբերություն ունեցող տարածքներին բնորոշ է բնակչության մեծ խտությունը:
- 2) Երկրագնդի բնակչության ընդամենը մի փոքր մասն է ապրում Արևելյան և Հարավային Ասիայում:
- 3) Բնակչության խտությունը տեղանքի բացարձակ բարձրության մեծացմանը զուգընթաց ավելանում է:
- 4) Բնակչության տեղաբաշխման օրինաչափություններից է նրա խտության աճը ծովերից կամ օվկիանոսներից հեռանալուն զուգընթաց:

31 **Աշխարհում ամենամեծ թվով ներգաղթածներ ունեցող երկրներից են.**

- 1) Հնդկաստանը և Ուզբեկստանը
- 2) Չինաստանը և Մոլդովան
- 3) Ճապոնիան և Կորեան
- 4) ԱՄՆ-ը և Գերմանիան

32 Սլավոնական լեզվախմբին պատկանող լեզուներ *չեն*.

- 1) հունարենը և վրացերենը
- 2) ռուսերենը և բելառուսերենը
- 3) լեհերենը և չեխերենը
- 4) ուկրաիներենը և չեխերենը

33 Ո՞ր երկրների համար է նավթի հանույթը միջազգային մասնագիտացման ճյուղ.

- 1) Լեհաստան և Իրաք
- 2) Վենեսուելա և Նիգերիա
- 3) Ալժիր և Եթովպիա
- 4) Շվեդիա և Իրան

34 Հիմնականում ներմուծվող հումքի և վառելիքի հիման վրա պողպատ արտադրող երկրներ են.

- 1) ԱՄՆ-ը և Ուկրաինան
- 2) Ճապոնիան և Իտալիան
- 3) Չինաստանը և ՌԴ-ն
- 4) Լեհաստանը և Բրազիլիան

35 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա:
- 2) Աէկներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:
- 3) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:
- 4) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:

36

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Բոլոր բնական զոնաների խտաբնակ շրջաններին և մերձքաղաքային գոտիներին բնորոշ է էքստենսիվ գյուղատնտեսությունը:
- 2) Գյուղատնտեսության կապիտալիստական–ձեռնարկատիրական սոցիալ–տնտեսական տիպը բնորոշ է հիմնականում Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի երկրներին:
- 3) Գյուղատնտեսության զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշներից առավել կարևոր է մեկ շնչի հաշվով գյուղմթերքների արտադրությունը:
- 4) 1960–ական թթ. տեղի ունեցած «Կանաչ հեղափոխությունը» բնորոշ էր զարգացած երկրներին, իսկ 1980–ական թթ. տեղի ունեցած երկրորդ «Կանաչ հեղափոխությունը»՝ զարգացող երկրներին:

37

**«Անասնապահության մասնագիտացման ճյուղ – երկիր» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) մսատու անասնապահություն – Արգենտինա
- 2) կաթնատու անասնապահություն – Լիբիա
- 3) խոզաբուծություն – Ինդոնեզիա
- 4) ոչխարաբուծություն – Դանիա

38

**ՆԱԵԿ-ի անդամ երկրներ են.**

- 1) ԱՄՆ–ը և Ռուսաստանը
- 2) Ալժիրը և Լիբիան
- 3) Լիբանանը և Սիրիան
- 4) Բրազիլիան և Արգենտինան

39

**Ո՞ր երկու պետություններն են Արևմտյան Եվրոպա տարածաշրջանում.**

- 1) Լիխտենշտեյն և Սան Մարինո
- 2) Լիխտենշտեյն և Լյուքսեմբուրգ
- 3) Սան Մարինո և Լյուքսեմբուրգ
- 4) Մոնակո և Անդորրա

40

**Կենտրոնական Ասիայի երկրներից Ռուսաստանին սահմանակից է.**

- 1) Ղրղզստանը
- 2) Տաջիկստանը
- 3) Ուզբեկստանը
- 4) Ղազախստանը

41

**Բնութագրումով որոշել պետությունը.**

*Հարավարևմտյան Ասիայի այս պետությունն աշխարհի առաջատարներից է բորատի ու քրոմիտի պաշարներով: Բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը: Բնակչության թվով երկրորդ ազգը քրդերն են: Ո՞րն է այդ պետությունը:*

- 1) Իրաքը
- 2) Թուրքիան
- 3) Սաուդյան Արաբիան
- 4) Իրանը

42

**Գերմանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Արտաքին առևտրի շրջանառության ծավալով առաջինն է աշխարհում:
- 2) Խոշոր նավահանգիստներից են Համբուրգը և Ռոստոկը:
- 3) Գետային ցանցը խիտ է, սակայն գետերը նավարկելի չեն:
- 4) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:

43

**Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Միջնաշխարհի կենտրոնական մասով զուգահեռականի ուղղությամբ ձգվում է Արևելյան (Հայկական) Տավրոսի լեռնաշղթան:
- 2) Արևելքից եզրավորվում է Փոքր Կովկասի լեռնային համակարգը կազմող լեռնաշղթաներով:
- 3) Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մարզը շուրջ 500 կմ ձգվում է Սև ծովի հարավային ափերի երկայնքով:
- 4) Եզրային ծալքաբեկորավոր լեռներից ամենաբարձրը Կորդվաց լեռնաշղթան է:

44

**Հայկական լեռնաշխարհի բուսականության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) 4000 բուսատեսակներից 200-ը էնդեմիկ են, այսինքն՝ հանդիպում են միայն Հայկական լեռնաշխարհում:
- 2) Լեռնաշխարհի փոքր տարածքի պատճառով բուսականությունը բազմազան չէ:
- 3) Արարատյան, Նախիջևանի և Ուրմիայի գոգավորությունների նախալեռնային գոտում տարածված է լեռնաչորասեր՝ ֆրիգանոիդ բուսականությունը:
- 4) Անտառների ստորին հարկում տիրապետում են լայնատերև ծառատեսակները, իսկ վերին հարկում՝ փշատերևները:

45 **Ընտրել «հանքաքար – հանքավայր» զույգերից ճիշտը.**

- 1) նեֆելինային սիենիտ – Եղեգնաձոր
- 2) ոսկի – Աբովյան
- 3) պղնձահրաքար – Կապան
- 4) երկաթ – Ալավերդի

46 **Ի՞նչն է բնորոշ ՀՀ չոր մերձարևադարձային կլիմայի տիպին.**

- 1) Տարածվում է 1500-2000 մ բարձրություններում:
- 2) Ձմեռը կարճատև է և մեղմ:
- 3) Տեղումների միջին տարեկան քանակը հասնում է 800-900 մմ-ի:
- 4) Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է +10<sup>0</sup>-ի շուրջ:

47 **Ո՞ր զույգի քաղաքները մինչև Հայաստանի խորհրդայնացումը քաղաքի կարգավիճակ ունեին.**

- 1) Գորիսը և Գավառը
- 2) Վարդենիսը և Մարտունին
- 3) Չարենցավանը և Հրազդանը
- 4) Դիլիջանը և Իջևանը

48 **ՀՀ սննդի արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը չունի արտահանման նշանակություն.**

- 1) գինու-կոնյակի
- 2) մրգի և բանջարեղենի պահածոների
- 3) մսի և մսամթերքի
- 4) հանքային ջրերի

49 **Ո՞ր մարզի տարածքում կա արգելոց.**

- 1) Արագածոտնի
- 2) Արմավիրի
- 3) Տավուշի
- 4) Արարատի

50


Տավուշի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հովտային շրջաններում լայն տարածում ունեն սողանքները:
- 2) Բարձրաչափական նիշերի տարբերությունը մոտ 2600 մ է:
- 3) Արևմտյան սահմանների երկայնքով ձգվում է Գուգարաց ծալքաբեկորավոր լեռնաշղթան:
- 4) Մակերևույթը հարավից հյուսիս աստիճանաբար բարձրանում է:

51

Ո՞ր լեռնագագաթն է քարտեզում նշված *Բ* տառով.

- 1) Գոգի
- 2) Ծղուկ
- 3) Ուրծ
- 4) Վարդենիս



52

Ո՞ր հանքավայրն է քարտեզում նշված *Ե* տառով.

- 1) Քաջարանի
- 2) Կապանի
- 3) Շահումյանի
- 4) Ագարակի

53 Ո՞ր երկրներն են աղքատ ջրաէներգետիկ ռեսուրսներով.

- 1) Վրաստանը և Նորվեգիան
- 2) Կանադան և Տաջիկստանը
- 3) Սաուդյան Արաբիան և Լիբիան
- 4) Ռուսաստանը և Թուրքիան

54 Տրվածներից ո՞րը անապատների աճման հիմնական պատճառ չէ.

- 1) անտառների հատումը
- 2) գյուղատնտեսական հողատարածքների գերբեռնվածությունը մշակաբույսերով
- 3) ագրոանտառաբարելավումը
- 4) արոտների գերարածեցումը

55 Բոլոր տեսակի կենդանի օրգանիզմների ժառանգական հատկանիշների ու հակումների ամբողջությունը կոչվում է.

- 1) գենոֆոնդ
- 2) ժառանգականություն
- 3) կենսացենոզ
- 4) էկոհամակարգ

56 Գրել այն լճերի համարները, որոնք Ասիայում են.

- |           |              |
|-----------|--------------|
| 1) Մեոյալ | 5) Սևանա     |
| 2) Ուրմիա | 6) Օնեգա     |
| 3) Թանա   | 7) Իսիկ Կուլ |
| 4) Պոոպո  | 8) Աթաբասկա  |

57 Գրել Միջերկրական ծովում գտնվող կղզիների համարները.

- |              |             |
|--------------|-------------|
| 1) Սիցիլիա   | 5) Սարդինիա |
| 2) Շրի Լանկա | 6) Հաիթի    |
| 3) Իսլանդիա  | 7) Կորսիկա  |
| 4) Կիպրոս    | 8) Թասմանիա |

58 Գրել այն երկրների համարները, որոնք ունեն 100 մլն-ից ավելի բնակչություն.

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Բրազիլիա  | 5) Ֆրանսիա   |
| 2) Գերմանիա  | 6) Իրան      |
| 3) Կանադա    | 7) Նիգերիա   |
| 4) Արգենտինա | 8) Ավստրալիա |

59

Գրել այն քաղաքների համարները, որոնք Հարավարևմտյան Ասիայի նավահանգիստներ են.

- |                 |             |
|-----------------|-------------|
| 1) Սպահան       | 5) Անկարա   |
| 2) Բենդեր Աբբաս | 6) Աբադան   |
| 3) Կարաչի       | 7) Մումբայ  |
| 4) Քաբուլ       | 8) Դամասկոս |

60

Գրել միագործառույթային քաղաքների համարները.

- |             |              |
|-------------|--------------|
| 1) Քաջարան  | 5) Նոր Հաճրն |
| 2) Ծաղկաձոր | 6) Իջևան     |
| 3) Հրազդան  | 7) Արմավիր   |
| 4) Կապան    | 8) Մեծամոր   |

61

Գրել այն տարածաշրջանների համարները, որոնք խաղողագործության մեջ մասնագիտացած չեն.

- |                   |                             |
|-------------------|-----------------------------|
| 1) Արփայի հովիտ   | 5) Եղվարդի սարավանդ         |
| 2) Սևանի ավազան   | 6) ՀՀ հյուսիսարևելյան մասեր |
| 3) Արարատյան դաշտ | 7) Զանգեզուրի հարավ (Մեղրի) |
| 4) Շիրակի դաշտ    | 8) Լոռվա սարահարթ           |

62

Արևմտյան Եվրոպայի տրված պետությունները դասավորել բնակչության թվաքանակի աճման կարգով.

- 1) Գերմանիա
- 2) Լյուքսեմբուրգ
- 3) Ֆրանսիա
- 4) Ավստրիա

63

ՀՀ տրված քաղաքների համարները դասավորել ըստ դրանց միջով հոսող գետերի հետևյալ հաջորդականությամբ՝ Աղստև, Որոտան, Դեբեդ.

- 1) Իջևան
- 2) Ալավերդի
- 3) Սիսիան



64 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. 22°, արլ. ե. 61°: Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:

(65-66) Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 24° է, իսկ գագաթին՝ 6°: Ստորոտը ծովի մակարդակից 1800 մ բարձրության վրա է (հաշվարկը կատարել 6°-ով):

65 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

66 Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:

(67-68) Երկրի բնակչության թիվը 8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 8 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 40 650 մարդ, արտագաղթը՝ 29 800 մարդ.

67 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

68 Որոշել բնակչության մեխանիկական աճը:

69

**Աշխարհի բնակչության ռասայական կազմի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

- 1) Նեգրոիդ մեծ ռասայի տարածման հիմնական շրջանը Հարավային Ասիան է:
- 2) Ռասաների բնութագրիչ հատկանիշերն են լեզուն, մշակույթը և կրոնը:
- 3) Ռասայական հատկանիշների ձևավորման վրա ավելի շատ ազդեցություն են թողել սոցիալ-տնտեսական և քաղաքական, քան բնական գործոնները:
- 4) Մոնղոլոիդ ռասային բնորոշ են դեղնավուն մաշկը, սև և ուղիղ մազերը, աչքերի նեղ բացվածքը:
- 5) Բնակչության ռասայական և ազգային կազմերի սահմանները մշտապես համընկնում են:
- 6) Ժամանակակից խառը ռասաների ներկայացուցիչները լայն տարածում ունեն Լատինական Ամերիկայում:

70

**Հայկական լեռնաշխարհի գետերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

- 1) Կուր գետի նշանավոր վտակներից են Խրամը, Դեբեդը, Աղստը:
- 2) Ունեն հիմնականում ձնաանձրևային և մասամբ ստորգետնյա սնում:
- 3) Հորդանում են առավելապես ամռանը:
- 4) Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից, Արևելյան Եփրատը՝ Ծաղկավետ լեռներից:
- 5) Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերի միախառնումից առաջանում է Շատ-Էլ-Արաբ գետը:
- 6) Սև ծովի ավազանին պատկանող գետերից է Ճորոխը: